

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հուլիսի 11-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԶԵՐՄՈՒԿ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 889-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) 25-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 26-27-րդ կետերով.

«

26.	8701209015	«IVECO» թամբային քարշակներ	IVECO STRALIS 460 2014-2021 թթ	հատ	8	ԵՄ	94 080 000
27.	8701209017	«IVECO» թամբային քարշակներ	IVECO STRALIS 460 2014-2021 թթ	հատ	8	ԵՄ	94 080 000

».

2) «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «1 584 724 726» թիվը փոխարինել «1 772 884 726» թվով: